ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2020թ. մարտի 17-ին N41

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ, ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԸ, ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ և ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ, ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ,ԱՈՒԴԻՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ , ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԱՉԱՓԸ, ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 26-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները՝ **որոշում եմ**.

1. Հաստատել՝
   1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ներքին աուդիտի կանոնակարգը՝ համաձայն N1 հավելվածի,
   2) Աուդիտորի/Ներքին աուդիտ ծառայություն մատուցող կազմակերպության ծառայության մատուցման գործընթացում ներգրավված աուդիտորների անկախության հայտարարագիրը՝

3) ներքին աուդիտի ենթակա միավորների ցանկը՝ համաձայն N3 հավելվածի,

4) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը՝ համաձայն N4 հավելվածի,

5) Ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը կազմելու նպատակով պահանջվող ռիսկերի գնահատման տեղեկագիրը՝ համաձայն N5 հավելվածի,

6) ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչները՝ համաձայն N6 հավելվածի,

7) աուդիտի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն N7 հավելվածի,

8) աուդիտորական առաջադրանքի արդյունքների մասին արձանագրությունը՝ համաձայն N8 հավելվածի,

9) գործողությունների ծրագրի ձևաչափը՝ համաձայն N9 հավելվածի,

10) ներքին աուդիտի որակի շարունակական և պարբերական գնահատումների ստուգաթերթը՝ համաձայն N10 հավելվածի,

11) ներքին աուդիտի ծառայության գործունեության տարեկան հաշվետվության ձևը՝ համաձայն N11 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի մարտի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի կանոնակարգը, աուդիտի ենթակա միավորների ցանկը, ներքին աուդիտորների ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը, աուդիտի ենթակա միավորների ռիսկերի գնահատման տեղեկագիրը և աուդիտի ենթակա միավորների ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչները հաստատելու մասին>> N26-Ա կարգադրությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X _____ Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713